

«Գրանցված է»
ՀՀ արդարադատության
նախարարության կողմից
23 օգոստոսի 2005 թ.
Պետական գրանցման թիվ 12405338

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

2 օգոստոսի 2005 թ.
ք. Երևան

N 1-05/08-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԲԵՌՆԱՏԱՐ ԱԿՏՈՄԵՔԵՆԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ, ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԵՎ ՎՃԱՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏՈՂ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ճանապարհային վճարի մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մարտի 3-ի ՀՕ-203 օրենքի 10' -րդ հոդվածը.

Հրամայում եմ

Հաստատել՝

ա) (ենթակետն ուժը կորցրել է 28.02.11 N 73-Ն)

բ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված 20 և ավելի տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենայով բեռնափոխադրում իրականացնելու համար հաշվարկված և վճարված ճանապարհային վճարի մասին հայտի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի,

գ) Հայաստանի Հանրապետությունում գրանցված 20 և ավելի տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենայով բեռնափոխադրում իրականացնելու համար ճանապարհային վճարի վճարումը հաստատելու մասին տեղեկանքի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

(Որոշումը փոփ. 28.02.11 N 73-Ն)

ՀՀ կառավարությանն առընթեր հարկային
պետական
ծառայության պետ

Ֆ. Ցոլակյան

Հավելված N 1

Հաստատված է

ՀՀ կառավարությանն առընթեր
հարկային պետական ծառայության պետի
2 օգոստոսի 2005 թ. N 1-05/08-Ն հրամանով

(Հավելվածն ուժը կորցրել է 28.02.11 N 73-Ն)

Հ Ա Յ Տ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ
 20 ԵՎ ԱՎԵԼԻ ՏՈՆՆԱ ԲԵՌՆԱՍԱՐԴՈՒԹՅԱՄԲ
 ԲԵՌՆԱՍԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅՈՎ ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄ
 ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ԵՎ
 ՎՃԱՐՎԱԾ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ**

| |
|---|
| Փաստաթղթի հերթական համարը N _____ (լրացվում է հարկային մարմնի կողմից) |
|---|

| | |
|--|-----|
| Հայտը ներկայացվում է 20__ թ. _____ ամսվա (ամիսների) համար | [1] |
| Հայտի ներկայացման ամսաթիվը, ամիսը և տարեթիվը | |

- Վճար վճարողները Հայաստանի Հանրապետությունում գրանցված 20 և ավելի տոննա բեռնատարողությամբ բեռնատար ավտոմեքենայի համար առանձին հայտն իրենց գրանցման վայրի հարկային տեսչություն են ներկայացնում բեռնափոխադրում (բեռնափոխադրումներ) իրականացնելու ամսվա (ամիսների) համար մինչև առաջին բեռնափոխադրում իրականացնելու օրը:
- [1] բաժնում լրացվում են համապատասխան տարվա բեռնափոխադրում (բեռնափոխադրումներ) իրականացնելու ամիսը (ամիսները) և հայտը հարկային մարմին ներկայացնելու ամսաթիվը, ամիսը և տարեթիվը.

| ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՏՎՅԱԼՆԵՐԸ | [2] |
|---|-----|
| Կազմակերպության անվանումը, կազմակերպատիրական ձևը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով) | |
| Կազմակերպության գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը և անձնագրային տվյալները | |
| Կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) աշխատանքային կամ տան հեռախոսահամարը | |
| Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը | |
| Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) սոցիալական ապահովության քարտի համարը | |

- [2] բաժնում լրացվում են ավտոմեքենայի սեփականատեր կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) համար պահանջվող տվյալները.

| | | |
|---------------------------------|---------------------------------|--|
| Բեռնատար ավտոմեքենայի տվյալները | [3] Ճանապարհային վճարի հաշվարկը | [4] Ճանապարհային վճարի վճարումը հավաստող փաստաթղթի տվյալները [5] |
| մակ- պետական | բեռնատար- ամսական | ամիսների ընդամենը |
| | ամիսը, | փաստաթղթի վճարված |

| նիշը | համարա- նիշը | դրությունը (տոննա) | վճարի չափը | քանակը | հաշ- վարկված է վճար | ամսաթիվը, տարեթիվը | համարը | գումարը |
|------|-----------------|-----------------------|---------------|--------|---------------------------|-----------------------|--------|---------|
| | | | | | | | | |

• [3] բաժնուն լրացվում են բեռնատար ավտոմեքենայի տվյալները՝ մակնիշը, պետական համարանիշը և բեռնատարողությունը.

• [4] բաժնուն լրացվում է բեռնափոխադրում (բեռնափոխադրումներ) իրականացնելու համար բեռնատար ավտոմեքենայով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության ճանապարհային վճարի հաշվարկը՝ համապատասխան բեռնատարողության համար «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքի 6.¹ -րդ հոդվածով սահմանված ամսական դրույքաչափին համապատասխան ճանապարհային վճարի ամսական չափը, մեկից ավելի ամիսների համար հայտ ներկայացնելու դեպքում՝ հայտում նշված ամիսների քանակը, ընդամենը բեռնափոխադրում (բեռնափոխադրումներ) իրականացնելու ամիսների համար հաշվարկված ճանապարհային վճարի ընդհանուր գումարը.

• [5] բաժնուն լրացվում են հայտին կից ներկայացվող՝ վճարի վճարումը հավաստող փաստաթղթի պահանջվող տվյալները: Հայաստանի Հանրապետությունում գրանցված բեռնատար ավտոմեքենաներով ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության համար ամսական վճարը վճարվում է մինչև տվյալ ամսում առաջին բեռնափոխադրում իրականացնելու օրը: Մեկից ավելի ամիսների համար հայտ ներկայացնելու դեպքում վճարումները կատարվում են հայտում ներկայացված բոլոր ամիսների համար.

| | | | | | | | | | |
|---|--|--|--|--|--|--|--|--|-----|
| Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագրերով, վարձակալության կամ օգտագործման պայմանագրերով բեռնատար ավտոմեքենայի բեռնափոխադրողի տվյալները | | | | | | | | | [6] |
| Բեռնափոխադրող կազմակերպության անվանումը, կազմակերպչի անվանումը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով) | | | | | | | | | |
| Բեռնափոխադրող կազմակերպության գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը և անձնագրային տվյալները | | | | | | | | | |
| Բեռնափոխադրող կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) աշխատանքային կամ տան հեռախոսահամարը | | | | | | | | | |
| Բեռնափոխադրող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | | |
| Բեռնափոխադրող ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) սոցիալական ապահովության քարտի համարը | | | | | | | | | |

• [6] բաժինը լրացվում է այն դեպքում, երբ բեռնափոխադրումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագրերով, վարձակալության կամ օգտագործման պայմանագրերով ավտոմեքենան շահագործող (օգտագործող) կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից

Հայտին կցվում են _____ էջ (էջեր):

• Հայտին պարտադիր կարգով կցվում են ավտոմեքենաների բեռնատարողությունը և ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության համար ճանապարհային վճարի վճարումը հավաստող համապատասխան փաստաթղթերի պատճենները:

**Վճար վճարողի
(պաշտոնատար անձի)**

(ստորագրությունը) (անուն, ազգանունը)
_____ 20__թ.

**Ճանապարհային վճարի հաշվարկը և վճարումները
համապատասխանում են Ճանապարհային վճարի
մասին ՀՀ օրենքի պահանջներին
_____ հարկային տեսուչ**

(ստորագրությունը) (անուն, ազգանունը)
_____ 20__թ.

Կ.Տ.

Ճանապարհային վճարի վճարումը հաստատող _____ 20__ թ. N _____

տեղեկանքը ստացա

(վճար վճարողի (պաշտոնատար անձի) պաշտոնը, ստորագրությունը, անունը, ազգանունը)

_____ 20__ թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 20.. թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ 20 ԵՎ ԱՎԵԼԻ ՏՈՆՆԱ
 ԲԵՌՆԱՏԱՐՈՂՈՒԹՅԱՄԲ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅՈՎ ԲԵՌՆԱՓՈՆԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ
 ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԿՃԱՐԻ ԿՃԱՐՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

| ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԻՐՈՋ ՏՎՅԱԼՆԵՐԸ | | | | | | | | | | [1] |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|-----|
| Կազմակերպության անվանումը, կազմակերպատիրավական ձևը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով) | | | | | | | | | | |
| Կազմակերպության գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը և անձնագրային տվյալները | | | | | | | | | | |
| Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | | | |
| Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) սոցիալական ապահովության քարտի համարը | | | | | | | | | | |

• [1] բաժնում լրացվում են բեռնափոխադրումներ իրականացնելու համար ավտոմոբիլային ճանապարհներով երթևեկության ճանապարհային վճար վճարողի (ավտոմեքենայի սեփականատիրոջ) տվյալները.

| Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագրերով, վարձակալության կամ օգտագործման պայմանագրերով բեռնատար ավտոմեքենայի բեռնափոխադրողի տվյալները | | | | | | | | | | [2] |
|--|--|--|--|--|--|--|--|--|--|-----|
| Կազմակերպության անվանումը, կազմակերպատիրավական ձևը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) անունը, ազգանունը («անհատ ձեռնարկատեր» նշումով) | | | | | | | | | | |
| Կազմակերպության գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) բնակության վայրը և անձնագրային տվյալները | | | | | | | | | | |
| Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ հարկ վճարողի հաշվառման համարը | | | | | | | | | | |
| Ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) սոցիալական ապահովության քարտի համարը | | | | | | | | | | |

• [2] բաժինը լրացվում է այն դեպքում, երբ բեռնափոխադրումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիազորագրերով, վարձակալության կամ օգտագործման պայմանագրերով ավտոմեքենան շահագործող (օգտագործող) կազմակերպության կամ ֆիզիկական անձի (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից.

| Բեռնատար ավտոմեքենայի տվյալները | | | Ճանապարհային վճարի հաշվարկը | | | Ճանապարհային վճարի վճարումը հավաստող փաստաթղթի տվյալները | | | |
|---------------------------------|--------------------|----------------------------|-----------------------------|-----------------|----------------------------|--|------------------|-----------------|---------------------------|
| մակ-նիշը | պետական համարանիշը | բեռնատարողությունը (տոննա) | ամսական վճարի չափը | ամիսների քանակը | ընդամենը ճանապարհային վճար | ամիսը, տարեթիվը | փաստաթղթի համարը | վճարված գումարը | զանձապետական հաշվի համարը |
| | | | | | | | | | |

Վճարողի կողմից ներկայացված հայտի հիման վրա բեռնափոխադրման ամսվա (ամիսների) համար ճանապարհային վճարի վճարումը հաստատող տեղեկանքը հարկային մարմինը տրամադրում է վճարողին: ՀՀ տարածքից դուրս եկող բեռնափոխադրում իրականացնելիս հարկային մարմնի կողմից տրված ճանապարհային վճարի վճարումը հաստատող տեղեկանքը մաքսային ձևակերպումների ժամանակ վճար վճարողը ներկայացնում է ՀՀ մաքսային մարմիններին: Որևէ ամսում ՀՀ մուտք գործող կամ ՀՀ տարածքից դուրս եկող բեռնափոխադրում իրականացնելիս տվյալ ամսվա համար ճանապարհային վճարի վճարումը հաստատող տեղեկանքի բացակայության դեպքում օրենքով սահմանված ամսական դրույքաչափերով վճարի գանձումը մաքսային ձևակերպումների ժամանակ բանկային համակարգի միջոցով իրականացնում են ՀՀ մաքսային մարմինները՝ վճար վճարողին տրամադրելով տվյալ ամսվա ճանապարհային վճարի վճարումը հաստատող տեղեկանքը:

20__ թ. _____ (ամսվա) ամիսների համար վճարված է ճանապարհային վճար _____ դրամ:

(գումարը տառերով)

| | |
|---|-----------------|
| _____ հարկային (տարածքային) տեսչություն կամ _____ մաքսատուն (մաքսակետ) | |
| տեղեկանքը տրամադրող պաշտոնատար անձի _____ (ստորագրությունը) | _____ (պաշտոնը) |
| _____ (անուն, ազգանունը) | _____ (պաշտոնը) |

Կ.Տ.